Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 3(51), նոյեմբեր, 19-29
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.3.019

ՎԱՂՆՋԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՏԵՔՍՏԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԵՏԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՌԻՓՍԻՄԵ ԶԱՔԱՐՅԱՆ[*]
Երևանի պետական համալսարան

Հոդվածում դիտարկվում է հնագույն աշխարհընկալման խորքային մոդելների և արքետիպային հիմքերի դրսևորման շարժընթացը (դինամիկան) բանահյուսական ավանդույթի ու հետարդիականության գեղարվեստական համակարգերի սահմանագծին: Հոդվածի նպատակն է սահմանել վաղնջագիտակցության իմացաբանական դերն ու դրա պոետիկական դրսևորումները բանահյուսական ավանդույթից դեպի հետարդիական արձակ անցման համատեքստում: Հետազոտության խնդիրներ են՝ սահմանել վաղնջագիտակցության էութենական բնութագրերն ու առանցքային հայեցակարգերը, բացահայտել գործառական դերը բանահյուսական և հետարդիական տեքստային համակարգերում՝ վեր հանելով դրա ազդեցությունը գեղարվեստական կառույցի ձևավորման խնդրում, դիտարկել բանահյուսական տեքստերը որպես վաղնջագիտակցության դրսևորման հարացույց՝ ավանդական ժանրերի և արքետիպային հիմքերի հետարդիական վերաձևման համատեքստում: Հետազոտության նորարարական մեթոդաբանությունը խարսխված է արդի գեղարվեստական նյութի բանագիտական վերլուծության վրա, ինչը համադրվել է համեմատական-տիպաբանական քննության, միջտեքստայնության ուսումնասիրության, ինչպես նաև կառուցվածքային մարդաբանության (Կ. Լևի-Ստրոս), ժանրային էվոլյուցիայի (Վ. Պ. Անիկին), արխայիկ գիտակցության էության ու սկզբունքների (Յու. Յու. Պերշին) տեսությունների և կառուցարկման մեթոդի հետ: Որպես հետազոտական նյութ դիտարկվել է բանահյուսական տեքստի (ATU 709 տիպի) գեղարվեստական վերակերպումը Նիլ Գեյմանի ստեղծագործություններում: Ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ արխայիկ մտակերպի տարրերը պատմական վերապրուկ չեն, այլ՝ ժամանակակից անհատի հոգեկառույցի շարժընթաց համակարգ, որն իրացվում է արդի գրականության մեջ ավանդական ժանրերի և արքետիպային

[*] **Հռիփսիմե Զաքարյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող
Рипсиме Закарян – кандидат филологических наук, научный сотрудник Институт археологии и этнографии НАН Республики Армения
Hripsime Zakaryan – Candidate of Philological Sciences, Research Fellow at the Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of the Republic of Armenia
Էլ. փոստ՝ hripsime.zakaryan@iae.am ORCID: https://orcid.org/0009-0004-2158-644X

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 02.09.2026
Գրախոսվել է՝ 07.09.2026
Հաստատվել է՝ 03.11.2026
© The Author(s) 2026

հիմքերի վերաձևմամբ: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ վաղնջագիտակցությունը տեսականորեն բնութագրվում է որպես հետարդիական անհատի հոգեկառույցի բաղադրիչ տարր և աշխարհաճանաչողության աղբյուր: Այս մոտեցումը նոր հեռանկար է բացում բանահյուսական սյուժեների հետարդիական վերակերպումների և ժամանակակից արձակի պոետիկայի ուսումնասիրության համար:

Բանալի բառեր – *վաղնջագիտակցություն, արխայիկ մտածողություն, բանագիտական մեթոդաբանություն, ժանրային էվոլյուցիա, հետարդիական արձակ, կառուցարկում, մշակութային արքետիպեր*

Վաղնջագիտակցությունը բարդ և բազմաշերտ հասկացույթ է, որն ընդգրկում է հնադարյան մարդու ինքնաճանաչման, աշխարհընկալման և կենսամիջավայրի վերաբերյալ պատկերացումների առանձնահատկությունները: Գիտական գրականության մեջ այս երևույթի հայեցակարգային տարաբնույթ ուսումնասիրությունները հանգեցրել են եզրութաբանական բազմազանության. ըստ հետազոտական շեշտադրումների՝ այն բնորոշվում է որպես «նախատրամաբանական» (état prélogique), «միստիկ», «միֆոպոետիկ», «միֆական» և այլն:

19-րդ դարից գիտական լեզվում կիրառվող «վաղնջական» կամ «արխայիկ» (հուն.՝ ἀρχαϊκός-հնադարյան) հասկացությունը սովորաբար վերաբերում է հելլենիստական մշակույթի վաղ՝ մ.թ.ա. 8-6-րդ դարերին: Արդի աշխարհում յուրօրինակ վերելք է ապրում հետաքրքրությունը հնագույն առասպելների հանդեպ: Այս միտումը հիմնավորվում է նախ հոգեվերլուծության տեսանկյունից (Զ. Ֆրոյդ, Կ. Գ. Յունգ). միֆաբանությունը մինչ օրս դիտարկվում է որպես մարդկային գիտակցության, աշխարհաճանաչողության և զգայական ընկալումների կառուցվածքային հիմք:

Ֆրանսիացի փիլիսոփա Մ. Մերլո-Պոնտին, անդրադառնալով մարդկային գիտակցության, աշխարհընկալման համընդհանուր բնույթին, նշում է. «Քանի դեռ ես գործում եմ որպես գիտակցություն, այսինքն՝ քանի դեռ ինչ-որ բան ինձ համար իմաստ ունի, ես կապված չեմ կոնկրետ տարածության հետ և ոչնչով չեմ տարբերվում ցանկացած «ուրիշ» գիտակցությունից»[1]: Այլ կերպ ասած՝ գոյություն ունի միջսուբեկտայնության միասնական, համապարփակ տիրույթ, որն ապահովում է մարդկային հոգեկառույցի անդրպատմական միասնականությունը մշակութային տարբեր դարաշրջաններում:

Վաղնջագիտակցության առանցքային գործառույթներից մեկը բնության անհայտ ու նորահայտ երևույթների մեկնաբանումն է՝ արդեն իսկ ճանաչելիի հետ նմանակման սկզբունքով: Այս մտակերպին բնորոշ է տարբերակված իրողությունների նույնացումը. միասնականն ու բազմակին, ամբողջն ու մասը,

[1] **Мерло-Понти, М.** (1999). Феноменология восприятия. СПб.: Ювента, Наука, с. 10.

բնականն ու գերբնականը, սուբյեկտիվն ու օբյեկտիվը հանդես են գալիս մեկ ամբողջության մեջ: Այս համատեքստում ողջ տիեզերքը դիտարկվում է որպես երկու հիմնարար սկզբնավորումների՝ Երկնքի և Երկրի (կամ արական և իգական սկիզբների) փոխազդեցության արդյունք: Ինչպես փաստում են մշակույթի փիլիսոփա, բանագետ Մ. Էլիադեի հետազոտությունները, նախնադարյան առասպելաբանության մեջ Երկինք-Երկիր զույգի (le couple primordial Ciel-Terre) անփոփոխ բնույթը տիեզերածնության համընդհանուր հիմքն է[2]: Ըստ այդմ՝ միֆը պարզապես առասպելաստեղծ երևակայության արդյունք չէ. նախնադարյան մարդու համար միֆն ու միֆականը ոչ թե հորինվածք էին, այլ գոյութենական իրականության ռացիոնալացման և կեցության վերահիմաստավորման յուրօրինակ եղանակ: Այն բնության և տիեզերական օրինաչափությունների առավելագույնս ճշգրիտ վերարտադրման ու արտացոլման առաջին գիտակցված փորձն էր: Ժամանակի ընթացքում միֆական իրականությունը, աստիճանաբար օտարվելով իր անմիջական էկզիստենցիալ նշանակությունից, փոխակերպվում է բանահյուսական տեքստի գեղարվեստական պատկերավորման համակարգի և կոմպոզիցիոն կառուցվածքի՝ դրսևորվելով ստեղծագործության պատկերավորման ոճական համակարգում, մշակութային իդեալների բովանդակային առանցքում: Արդյունքում, կարելի է ասել, որ բանահյուսական տեքստն անցյալի վերակերպված իրականությունն է, որը պատմական համատեքստի փոփոխության արդյունքում վերածվում է ազգային գեղագիտական և բարոյական արժեհամակարգի:

Վաղնջագիտակցությունը մտածողության ձևի և իմացաբանական գործընթացի նախահիմքն ու դրանց կենսունակության անհրաժեշտ նախապայմանն է: Այն արտացոլում է աշխարհի ճանաչողության և գիտակցության դրսևորման մարդու առաջնային, տարերային փորձը, որի արդյունքները կազմում են մարդկային մտակերպի անփոփոխ առանցքը:

Չնայած վաղնջական և արդիական մտածողության միջև առկա էական տարբերություններին, վերջինիս բնորոշ ձևերը շարունակում են դրսևորվել նաև արդի ժամանակներում: Հիմնվելով այս դիտարկման վրա՝ ամերիկացի ազգագրագետ, մարդաբան, լեզվաբան Ֆ. Բոասը եզրակացնում է, որ գոյություն չունեն մտածողության այնպիսի տեսակներ, որոնք անհամատեղելի են միմյանց հետ. փոխարենն առկա են մտածողության տարբեր կառույցներ, որոնք համագոյակցում են ինչպես միևնույն հասարակության, այնպես էլ անհատական գիտակցության մակարդակներում[3]: Այլ կերպ ասած՝ գիտակցության էությունը մնում է անփոփոխ. փոխակերպվում են միայն դրա դրսևորման ձևերն ու մեխանիզմները: Այս համատեքստում վաղնջագիտակցությունը ոչ թե պատմական անցյալի վերապրուկ է, այլ ժամանակակից մարդու հոգեկառույցի անբաժանելի և գործուն բաղադրիչը: Այն իդեալական համակարգ է,

[2] Տե՛ս **Eliade, M.** (1953). Traité d'histoire des religions. Paris: Payot, էջ 211:

[3] Տե՛ս **Boas, F.** (1938). The Mind of Primitive Man. Revised edition. New York: The Macmillan Company.

ճանաչողության երևույթ, որը հիմք է դառնում մարդու **մշակութային ինքնադրսևորման** ու աշխարհի իմացաբանական-արժեբանական յուրացման գործընթացների համար:

Դրա (վաղնջագիտակցության) անփոփոխության և հոգեկերտվածքային կայունության տիպական դրսևորումն է ստորին առասպելաբանական շերտի կենսունակությունը. քրիստոնեության հաստատումից ի վեր այդ պատկերացումները, պահպանելով իրենց նախնական էությունը, մինչ օրս շարունակում են գոյատևել ժողովրդական հավատալիքների, բանավոր զրույցների և ծիսական սովորույթների համակարգում[4]: Հիշյալ հավատալիքները պատմականորեն անցյալ չեն, այլև այսօր էլ արմատավորված են հավաքական գիտակցության մեջ՝ պահպանելով իրենց հոգեբանական ազդեցությունը:

Աշխարհի ճանաչողության առաջնային փորձը, որը կենսավորել է մարդուն որպես տեսակ, ժամանակի ընթացքում տեղափոխվել է ենթագիտակցության խորքային շերտեր՝ սահմանելով մշակութային արքետիպեր (ըստ Կ. Գ. Յունգի արքետիպերի տեսության)՝ կանխորոշելով հասարակության ու բնության «համազարգացման» հիմքերը: Այն (աշխարհաճանաչողության նախնական փորձը), տեղափոխվելով անգիտակցականի տիրույթ, շարունակում է ներազդել մարդու կենսագործունեության վրա:

Այսպիսով՝ արդի անհատի անգիտակցականի կառույցը խարսխված է վաղնջամտածողության արքետիպային հիմքերի վրա: Վաղնջագիտակցությունը՝ որպես գիտակցության հիմնաշերտ, ռացիոնալի և առասպելակրոնականի պարադոքսալ համադրություն է: Արտաքին աշխարհի ներազդեցությամբ վաղնջական շերտից աստիճանաբար տարբերակվում է անհատականությունը՝ էությունից սկիզբ առնող ու հավերժ ձևավորվող «Ես»-ը: Չնայած իր նախնական բնույթին՝ գիտակցականի այդ հատվածն արտացոլում է օբյեկտիվ իրականությունը և հաղորդակցվում «իրականության» լեզվով՝ յուրացնելով աշխարհի ինքնաբացահայտվող բովանդակությունը: Արտաշխարհը, ներթափանցելով վաղնջագիտակցության խորքային շերտեր, կազմավորում է նրա անհատականությունը: Այլ կերպ ասած՝ արտաշխարհն է արարում մարդուն՝ «իր պատկերով և նմանությամբ». «Մարդն ապրում է տոհմային, ցեղային կապի մեջ և ինքն իրեն պարզաբանում է՝ արտապատկերվելով իրեն շրջապատող օբյեկտիվ աշխարհի և մարդկային կյանքի երևույթների վրա: Այդպես նրա մեջ ստեղծվում են ընդհանրացումներ, ցանկալի և անցանկալի գործունեության տիպեր, հարաբերությունների նորմեր. նույն գործընթացը կատարվում է նաև այլոց մեջ՝ հարաբերականորեն նույնպիսի պայմաններում և նույն արդյունքներով, քանի որ հոգեկան մակարդակը մեկն է»[5]: Վաղնջագիտակցությունը

---

[4] Տե՛ս **Գալստյան, Հ.** (2026). Հայ ստորին առասպելաբանություն. չար ոգիներ: Եր., ՀԱԻ հրատ., էջ 14:

[5] **Веселовский, А. Н.** (1989). Историческая поэтика. М.: Высшая школа, с. 213.

սկիզբ է առնում սեփական անձն ու անհատականությունը գիտակցող վաղնջամարդու և արտաշխարհի հետ ունեցած նրա հանդիպադրության արդյունքում[6]: Հենց այդ հակադրությունն է մարդու և աշխարհի միջև նախնական հաղորդակցությունը: Ուրեմն՝ վաղնջագիտակցությունն ի սկզբանե հաղորդակցական է ու արարչաստեղծ: Արարչաստեղծ, քանզի միտված է իրականության վերափոխմանն ու աշխարհին տիրանալու ձգտմանը: Այսպիսով, վաղնջագիտակցության շարժիչ ուժը հակասությունն է իրական ու իդեալական աշխարհների միջև՝ դրսևորված բանահյուսական տեքստերի և ընդհանրապես՝ գեղարվեստական ստեղծագործության տարբեր համակարգերում ու շերտերում: Թե՛ բանահյուսական, թե՛ գեղարվեստական տեքստերն ամփոփում են այդ երկու աշխարհների հանդիպումը՝ մարդու՝ սեփական իդեալական նեռաշխարհի և արտաշխարհի միջև ներդաշնակություն փնտրելու հարատև ոռոնումը: Ե՛վ բանահյուսական, և՛ գեղարվեստական երկերն օժտված են արժեբանական բովանդակությամբ և իրականության յուրացման հոգևոր-իմացական յուրահատուկ եղանակ են:

Եթե վաղնջագիտակցության համար անորոշության աղբյուրը բնական տարերքն ու տիեզերական քաոսն էր, ապա հետարդիականության դարաշրջանում մարդն առերեսվում է տեխնոլոգիական իրականության նոր մարտահրավերներին: Գիտատեխնիկական առաջընթացը վերածվել է ինքնավար և օտարված մի ուժի, որը հակադրվում է անհատին՝ կանգնեցնելով անկանխատեսելի ապագայի առջև: Արդյունքում հետարդիական մարդը հայտնվում է նույնպիսի տագնապի և մետաֆիզիկական անպաշտպանվածության մեջ, ինչպիսին նախնադարյան մարդու վախն էր տիեզերական անհասանելի ուժերի առջև:

Նշյալ էկզիստենցիալ հիմնախնդիրը անգլիացի հետմոդեռնիստ գրող Նիլ Գեյմանի «Ամերիկյան աստվածները» (American Gods)[7] վեպում վերածվում է սյուժետային հենքի: Ստեղծագործությունը հետմոդեռնիստական առասպելաստեղծման (mythopoeia) եզակի օրինակ է, որտեղ հեղինակը վերաիմաստավորում է հնագույն միֆաբանական տեքստերը ժամանակակից գոյութենական ճգնաժամի համապատկերում: Ստեղծագործության առասպելաբանական տարածությունը բնակեցված է ապասրբայնացված «հին աստվածներով» (Օդին, Անուբիս, Կալի), որոնք, ներգաղթյալների հետ հայտնվելով Ամերիկայում, վերածվել են մարգինալ կերպարների և հակադրվում են սպառողական հասարակության «նոր կուռքերին»՝ Մեդիային, Տեխնոլոգիային և Համացան-

[6] Տե՛ս **Першин, Ю. Ю.** (2014). Архаическое сознание: сущность и принципы: Дис. ... д-ра филос. наук. Омск, էջ 44-45:

[7] Տե՛ս **Гейман, Н.** (2014). Американские боги; Король горной долины; Сыновья Ананси. М.: АСТ:

ցին: Այսպիսով, «հին աստվածների» կեցությունը հակադրվում է «նոր աստվածներին»: Վեպի հիմքում գլխավոր հերոսի՝ Ստվերի (Shadow)[8] նվիրագործման (ինիցիացիայի)[9] եռափուլ ընթացքն է: Մեկնարկային փուլում հերոսը զրկվում է նախկին սոցիալական կապերից (բանտարկություն, կնոջ մահ), ինչին հաջորդում է անցումային (լիմինալ) շրջանը: Այստեղ առասպելական կերպարները ստանձնում են նոր դերեր. հերոսը ձեռք է բերում «կախարդական» ոսկեդրամ և մոգական դաշնակիցներ (Սուինի, Լորա): Վերջնափուլում ինքնազոհաբերությունից և հանդերձյալ աշխարհի փորձություններից հետո (միջտեքստային աղերս եգիպտական «Մեռյալների գրքի» հետ) Ստվերը վերածնվում է որպես որակապես նոր, նվիրագործված անհատականություն՝ օժտված բարձրագույն ինքնագիտակցությամբ, և կանխում վախճանաբանական բախումը՝ Ռագնարյոկը: Կիրառելով հետմոդեռնիստական մեջբերման սկզբունքը՝ հեղինակը ստեղծում է միջտեքստային բարդ համակարգ՝ «Էդդաներից» մինչև «Երգ երգոցը»: Ն. Գեյմանի նորարարությունն այս պարագայում մարդաստված փոխհարաբերության վերաիմաստավորումն է: Վեպի փիլիսոփայական առանցքը ներառում է ոչ միայն աստվածների տեղը արդի կեցության մեջ, այլև մարդու դերի ու ինքնության վերաիմաստավորումը նրանց աշխարհում:

Առասպելաբանական շերտերի այսօրինակ վերաիմաստավորումն իր տրամաբանական շարունակությունն է ստանում Ն. Գեյմանի փոքրածավալ արձակում, որտեղ հեղինակը դիմում է դասական հեքիաթի վերակառուցարկմանը: Սրա առավել ցայտուն դրսևորումը «Ձյուն, հայելի, խնձորներ» (Snow, glass, apples)[10] պատմվածքն է, որը «Սպիտակաձյունիկի» (ATU 709 (Uther,

---

[8] Հերոսի անունը՝ Ստվեր (Shadow), կրում է պայմանական բնույթ: Անվանադրության հարցում հեղինակը կիրառում է հեքիաթին բնորոշ անվանաբանական պայմանականության սկզբունքը, որտեղ անձնանունն օժտված է գործառութային և խորհրդանշական իմաստով: Այն մատնանշում է հերոսի նախնական՝ պասիվ և «աննկատ» կարգավիճակը, որը փոխակերպվում է նվիրագործման գործընթացի արդյունքում:

[9] Նվիրագործման (ինիցիացիայի) ծեսերը ավանդական մշակույթներում կարգավորում են անհատի անցումը մեկ սոցիալ-հոգևոր վիճակից մեկ այլ վիճակի: Այս անցումն իրականանում է եռափուլ կառուցվածքով՝ անջատում (սեպարացիա), սահմանայնություն (լիմինալություն) և վերաինտեգրում (ինկորպորացիա): Ծիսակարգի մեկնարկային նախապայմանը անհատի մեկուսացումն է սովորական միջավայրից: Սահմանափակող պատերը խորհրդաբանում են մայրական արգանդը կամ անդրշիրիմյան աշխարհը: Սահմանային (լիմինալ) փուլում նվիրագործվողը զրկվում է կարգավիճակից ու անունից. այստեղ նվիրագործությունը հավասարեցվում է մահվան: Որպեսզի ծնվի նոր ինքնությունը, հին «ես»-ը պետք է խորհրդանշորեն «մահանա»: Փորձությունների հաղթահարմանը հաջորդում է ծեսի եզրափակիչ փուլը, որտեղ նվիրագործությունը դառնում է սրբագործության (սակրալացման) հոմանիշ: Հաղթահարելով «մահը»՝ անհատը վերածնվում է: Վերաինտեգրման փուլում վերադառնում է հասարակություն որպես լիիրավ, սրբագործված անդամ՝ ստանալով նոր կարգավիճակ, նոր անուն և սոցիալական պատասխանատվություն (**Тэрнер, В.** (1983). Символ и ритуал. М.: Главная редакция восточной литературы издательства «Наука», с. 168-196; **Van Gennep, A.** (1909). Les Rites de passage. Paris: Émile Nourry, pp. 93–115):

[10] Տե՛ս **Gaiman, N.** (2005). Smoke and mirrors: Short fictions and illusions. London: Review:

2004))[11] յուրօրինակ հայելային վերակառուցումն է: Պահպանելով հեքիաթի կառուցվածքային հիմնաշերտը՝ հեղինակը հիմնովին շրջում է կերպարների գործառութային նշանակությունը. Թագուհին մարմնավորում է «բարի» կամքով օժտված «իմաստուն» պաշտպանին, մինչդեռ Արքայադուստրը քաոսի և անդրշիրիմյան ուժերի կրողն է: Ն. Գեյմանը հավատարիմ է մնում ավանդական հեքիաթի տարածական և կառուցվածքային տարրերին՝ անտառի ու լեռների սիմվոլիկային, գահակալության մոտիվին: Սակայն, ի հակադրություն դասական ավարտի, պատմությունն ավարտվում է ոչ թե գարնանային զարթոնքով, այլ հավերժական ձմռան և մահվան հաստատմամբ (ըստ առասպելաբանական պատկերացումների՝ այս հեքիաթը տիեզերական պայքարի փոխաբերություն է, որտեղ Սպիտակաձյունիկը կենսատու արևի անձնավորումն է, իսկ նրա խորթ մայրը՝ Ձմռան խորհրդանիշը, որն ամեն գնով փորձում է կանխել բնության վերազարթոնքը): Ստեղծագործությունը վերածվում է բազմաձայն (պոլիֆոնիկ) տեքստի՝ անցյալի ավանդույթները երկխոսության մեջ դնելով ժամանակակից իրողությունների հետ: Հատկանշական է, որ դրա հրատարակմանը հաջորդած առանձին ելույթում հեղինակը, քննադատելով հեքիաթի ընկալման կարծրատիպացված մեթոդաբանությունը, շեշտում է ժանրի վերաիմաստավորման անհրաժեշտությունը. «Ինձ զարմացնում է գիտնականների վերաբերմունքը հեքիաթին՝ որպես մի սառը, անկենդան և արդիականության հետ որևէ աղերս չունեցող առարկայի: Նրանք կարծում են, թե հեքիաթը կարելի է տեղադրել առարկայական ապակու վրա, ուսումնասիրել մանրադիտակի տակ»[12]՝ առանց որևէ կապ տեսնելու ներկայի հետ:

Հետարդիական դարաշրջանում գրական-բանահյուսական կապերը թևակոխում են որակապես նոր շրջափուլ. բանահյուսական ավանդույթները դառնում են գրական-գեղարվեստական համակարգի առանցքային մասը: Բանահյուսական տեքստերի վերակերտումը ժամանակակից գեղարվեստական համակարգում կրում է երկակի բնույթ: Մի կողմից այն ստեղծագործական ճգնաժամի հաղթահարման արդյունավետ միջոց է, որը ավանդույթի ու նորարարության երկխոսության և անցյալի ու արդի փորձի համադրման շնորհիվ սահմանում է պոետիկական նոր չափումներ ու հիմնավորում գեղարվեստական նոր հարցադրումներ: Մյուս կողմից՝ գոյութենական վերադարձ մարդկային փորձառության այն արքետիպային հիմքերին, որոնք թույլ են տալիս գեղարվեստական տեքստի տիրույթում արդիականության քաոսը կարգավորել հավերժական խորհրդանիշների միջոցով: Այս համատեքստում վաղնջագիտակցությունը ոչ թե պատմական անցյալի վերապրուկ է, այլ հետարդիական մարդու հոգեկառույցի անբաժանելի և գործուն բաղադրիչը:

---

[11] Տե՛ս **Uther H.-J.** (2004) The Types of International Folktales: A Classification and Bibliography. Helsinki: Academia Scientiarum Fennica, Vols. 1–3:

[12] Մեջբերումն ըստ՝ **Лозовик, Е. В.** (2014). Роль повествователя в литературной сказке Нила Геймана «Снег, зеркало, яблоки». Дискуссия, 2(43), էջ128:

Հեքիաթի՝ որպես մշակութային երևույթի արդիականությունը և դրա հիմնարար կապը ներկայի հետ առավել հիմնավոր վերլուծության են ենթարկվում ֆրանսիացի ազգագրագետ, փիլիսոփա և մշակութաբան Կ. Լևի-Ստրոսի կառուցվածքային մարդաբանության հայեցակարգում: Հրաժարվելով հեքիաթը դիտարկել որպես անցյալի «քարացած» կամ «անկենդան» մասունք՝ հեղինակն այն սահմանում է որպես մտածողության կենսունակ համակարգ, որը գործում է «բրիկոլաժի» (bricolage) սկզբունքով. անցյալի խորհրդանշական բեկորները մշտապես վերաձևվում են՝ լուծելու ներկայի գոյութենական և սոցիալական հակասությունները: Ինչպես նկատում է Կ. Լևի-Ստրոսը՝ հենվելով Ֆրանց Բոասի դիտարկման վրա, «...առասպելաբանական տիեզերքները դատապարտված են քանդվելու ձևավորվելուն պես, որպեսզի դրանց բեկորներից ծնվեն նոր տիեզերքներ»[13]: Բանագետ Վ. Պ. Անիկինը նույն գործընթացը դիտարկում է հեքիաթի ժանրային բարեշրջութան օրինակով: Թե՛ Ն. Գեյմանի, թե՛ Կ. Լևի-Ստրոսի և թե՛ Վ. Պ. Անիկինի դիտարկումները հանգեցնում են այն համոզմանը, որ ժողովրդական աշխարհընկալման ընդհանրական բնույթը պահպանվում է հենց տարաժամանակյա մշակութային շերտերի վերաիմաստավորման և նոր գեղագիտական մտահղացմանը ենթարկվելու շնորհիվ. «Հեքիաթի չափազանցված (հիպերբոլիկ) հորինվածքում միավորվել են ժողովրդական մտածողության տարժամանակյա «շերտեր» սկսած հնագույն ժամանակներից մինչև այն դարաշրջանը, երբ հեքիաթը վերածվեց զուտ գեղարվեստական ստեղծագործության դրսևորման»[14]: Բանահյուսական ստեղծագործությունը՝ որպես որոշակի դարաշրջանում իրականության գեղագիտական յուրացման եղանակ, միտված է արտահայտելու ժողովրդական աշխարհընկալման ընդհանրական բնույթը: Այս համակարգը պայմանավորված է պատմական գործոններով, մասնավորապես՝ այս կամ այն էթնոսի սոցիալ-մշակութային և բարոյագիտական ընդհանրական խնդիրներով: Նշված իրողությունների ազդեցությամբ՝ պատմական այլ ժամանակաշրջաններում ձևավորված բանահյուսական ժանրերը կրել են կառուցվածքային, տիպաբանական ու գեղարվեստական սկզբունքների վերափոխումներ՝ հարմարվելով նոր պատմաշրջանի առաջադրած խնդիրներին:

Վերոբերյալ դիտարկումները հայեցակարգային առումով «արձագանքում» են դեռևս 1936 թվականին անգլիացի բանաստեղծ և լեզվաբան, Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Ջոն Ռ. Ռ. Թոլքինի կողմից ձևակերպված գաղափարին: Իր նշանավոր՝ «Բեովուլֆ. հրեշները և քննադատները» (Beowulf: The Monsters and the Critics) էսսեում Ջոն Ռ. Ռ. Թոլքինը քննադատական մոտեցումների այլաբանական պատկերման միջոցով կանխատեսել էր գրականա-

[13] **Lévi-Strauss, C.** (1962). La Pensée sauvage. Paris: Librairie Plon, p. 31.

[14] **Аникин, В. П.** (1980). Теория фольклорной традиции и ее значение для исторического исследования былин. М.: Изд-во МГУ, с. 245.

գիտության ու բանագիտության մեջ այսօրինակ մեթոդաբանական ճգնաժամը: Ջոն Ռ. Ռ. Թոլքինը գրականության քննադատներին ու բանագետներին նմանեցնում է այն մարդկանց, որոնք քանդում են հին քարերից կառուցված տոհմական աշտարակը՝ միայն թե դրա հիմքերում հնագույն արձանագրություններ փնտրեն: Տապալելով աշտարակը՝ նրանք դժգոհում են, թե շուրջբոլորը «խառնաշփոթ է», և այդպես էլ չեն հասկանում, որ այդ կառույցի բուն նպատակը եղել է դրա գագաթից բացվող ծովի տեսարանը…[15]:

Այսպիսով, ժամանակի ընթացքում բանահյուսական տեքստերը՝ վերժամանակյա այդ հիմնատիպերը, ներթափանցում են իմաստային ու տարածական նոր ոլորտներ՝ շարունակական փոխակերպումներով ամրակայվում հաջորդող սերունդների գիտակցության մեջ՝ վերասահմանելով նրանց հոգևոր ընկալումները: Այդ ավանդական, կայուն հիմքերը միահյուսվում են հետարդիական խոսույթին, բյուրեղանում, ամփոփվում ու նորովի են արտացոլում կեցության բազմաշերտ դրսևորումները:

Վաղնջագիտակցության ճանաչողական փոխակերպումների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն ժամանակակից մարդու հոգեկառույցի անբաժանելի և գործուն բաղադրիչն է: Այն իրականության ռացիոնալացման և աշխարհի իմացաբանական-արժեբանական յուրացման առաջնային, տարակառույց համակարգ է, որի խորքային կառույցները պահպանում են իրենց կենսունակությունը պատմամշակութային փոփոխությունների ողջ ընթացքում: Պատմական տարբեր դարաշրջաններում բանահյուսական ժանրերի և գեղարվեստական տեքստերի կրած տիպաբանական ու կառուցվածքային վերափոխումները փաստում են մարդկային գիտակցության անփոփոխ էության և մտածողության տարբեր ձևերի համագոյակցության մասին: Հետարդիականության համատեքստում վաղնջական մտակերպի վերակերտումը գործում է «բրիկոլաժի» սկզբունքով, որտեղ անցյալի խորհրդանշական բեկորների վերակառուցարկումն ու վերաձևումը ծառայում են արդի աշխարհի մարտահրավերների հաղթահարմանը՝ համաշխարհայնացման բացասական հետևանքների ծավալման համատեքստում: Ի սկզբանե օժտված լինելով հաղորդակցական և արարչաստեղծ բնույթով՝ վաղնջագիտակցության արքետիպային հիմքերը դառնում են ավանդույթի և նորարարության երկխոսության առանցքը՝ սահմանելով պոետիկական նոր չափումներ և ապահովելով գոյութենական վերադարձ մարդկային փորձառության հավերժական խորհրդանիշներին:

РИПСИМЕ ЗАКАРЯН – ***Структурные трансформации архаического сознания: от фольклорного текста к постмодернизму.*** – В статье рассматривается динамика проявления глубинных моделей и архетипических оснований архаического мировосприятия на

[15] Տե՛ս **Tolkien, J. R. R.** (1966). Beowulf: The Monsters and the Critics. In The Tolkien Reader. New York: Ballantine Books, p. 105-106:

стыке фольклорной традиции и художественных систем постмодернизма. Цель статьи — определить гносеологическую роль прасознания и его поэтические репрезентации в контексте перехода от фольклорной традиции к постмодернистской прозе. Исходя из цели исследования, были поставлены следующие задачи: определить сущностные характеристики и ключевые концепты архаического сознания; выявить функциональную роль архаического сознания в фольклорных и постмодернистских текстовых системах, раскрыв его влияние на проблему формирования художественной структуры; рассмотреть фольклорные тексты как парадигмы зарождения и становления архаического сознания в контексте постмодернистской трансформации традиционных жанров и архетипических основ. Новаторская методология исследования основана на фольклористическом анализе современного художественного материала в сочетании со сравнительно-типологическим методом, интертекстуальным анализом, а также теориями структурной антропологии (К. Леви-Стросс), жанровой эволюции (В. П. Аникин) и сущности архаического сознания (Ю. Ю. Першин). В качестве исследовательского материала рассматривается художественная трансформация фольклорного текста (типа ATU 709) в творчестве Нила Геймана. В результате исследования обосновано, что элементы архаического мышления являются не историческим пережитком, а динамической системой психоструктуры современного индивида, реализующейся в новейшей литературе через трансформацию традиционных жанров. Актуальность исследования обусловлена тем, что архаическое сознание теоретически характеризуется как компонент психоструктуры постмодернистского индивида и источник миропознания. Данный подход открывает новые перспективы для анализа проявлений культурной идентичности современного субъекта.

Ключевые слова: *архаическое сознание, архаическое мышление, фольклористическая методология, жанровая эволюция, постмодернистская проза, деконструкция, культурные архетипы*

HRIPSIME ZAKARYAN – *Structural Transformations of Archaic Consciousness: From Folklore Text to Postmodernism*. – The article examines the dynamics of deep models and archetypal foundations of archaic world perception at the crossroads of folkloric tradition and postmodern artistic systems. The study aims to define the epistemological role of primeval consciousness and its poetic manifestations within the transition from folklore tradition to postmodern prose. The innovative methodology of the research is grounded in the folkloristic analysis of contemporary literary material, synthesized with comparative-typological examination, intertextual analysis, and the theories of structural anthropology (C. Lévi-Strauss), genre evolution (V. P. Anikin), and the nature of archaic consciousness (Yu. Yu. Pershin). The research material focuses on the artistic transformation of the folkloric text (ATU 709 type) in the works of Neil Gaiman. The study demonstrates that elements of the archaic mindset are not historical relics, but rather a dynamic system within the modern individual's psychostructure, manifested in contemporary literature through the reshaping of traditional genres. The relevance of the research stems from the theoretical characterization of archaic consciousness as an element of the postmodern individual's psychostructure and a source of world cognition. This approach opens up new perspectives for studying the postmodern transformations of folkloric plots and the poetics of contemporary prose.

Key words: *archaic consciousness, archaic mindset, folkloristic methodology, genre evolution, postmodern prose, deconstruction, cultural archetypes*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները:

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ:

Գրականության ցանկ / References

Գալստյան, Հ. (2026). Հայ ստորին առասպելաբանություն. չար ոգիներ: Երևան: ՀԱԻ հրատ.:
Аникин, В. П. (1980). Теория фольклорной традиции и ее значение для исторического исследования былин. М.: Изд-во МГУ / Anikin V. P. Teoriya fol'klornoy tradicii i ee znachenie dlya istoricheskogo issledovaniya bylin. M., Izd-vo MGU, 1980, 332 s.
Веселовский, А. Н. (1989). Историческая поэтика. М.: Высшая школа / Veselovskiy A. N. Istoricheskaya poetika. M., Vysshaya shkola, 1989, 648 s.
Гейман, Н. (2014). Американские боги; Король горной долины; Сыновья Ананси. М.: АСТ / Geyman N. Amerikanskie bogi; Korol' gornoy doliny; Synov'ya Anansi. M., AST, 2014, 685 s.
Лозовик, Е. В. (2014). Роль повествователя в литературной сказке Нила Геймана «Снег, зеркало, яблоки». Дискуссия, 2(43), с. 128-133 / Lozovik E. V. Rol' povestvovatelya v literaturnoy skazke Nila Geymana «Sneg, zerkalo, yabloki» // Diskussiya. 2014, №2 (43), s. 128-133.
Мерло-Понти, М. (1999). Феноменология восприятия. СПб.: Ювента, Наука / Merlo-Ponti M. Fenomenologiya vospriyatiya. SPb., Yuventa, Nauka, 1999, 603 s.
Першин, Ю. Ю. (2014). Архаическое сознание: сущность и принципы: Дис. ... д-ра филос. наук. Омск / Pershin Yu. Yu. Arhaicheskoe soznanie: suschnost' i principy: Dis. ... d-ra filos. nauk. Omsk, 2014, 271 s.
Тэрнер, В. (1983). Символ и ритуал. М.: Главная редакция восточной литературы издательства «Наука» / Terner V. Simvol i ritual. M., Glavnaya redakciya vostochnoy literatury izdatel'stva «Nauka», 1983, 277 s.
Boas, F. (1938). The Mind of Primitive Man. Revised edition. New York: The Macmillan Company.
Eliade, M. (1953). Traité d'histoire des religions. Paris: Payot.
Gaiman, N. (2005). Smoke and mirrors: Short fictions and illusions. London: Review.
Lévi-Strauss, C. (1962). La Pensée sauvage. Paris: Librairie Plon.
Tolkien, J. R. R. (1966). Beowulf: The Monsters and the Critics. In The Tolkien Reader. New York: Ballantine Books.
Uther, H.-J. (2004). The Types of International Folktales: A Classification and Bibliography. Vols. I–III. Helsinki: Academia Scientiarum Fennica.
Van Gennep, A. (1909). Les Rites de passage. Paris: Émile Nourry.